Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4418

281.64
3-36

1866

2010

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ա Ր

ԳԵՐԱԳՈՅՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

281.6а
Z-36
300
1584-ԶԱ
12346

Ի ՍԱՐԳՍԷ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՉԱԼԱԼԵԱՆՑ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
—
1866

300
1584-ԶԱ

13536

Ա. Ռ.

ԳԵՐԱԳՈՅՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ

Պարոն ոմն Ստեփան անուն Պերճ Պօղոսեան Փափազեանց ի դասագրքոջն յօրինեցեալ յինքենէ Ազգային Պատմութիւն անուամբ՝ տպեալ ի Պոլիս ի 1863 ամի, յերես 188. յօդ. 155. զրէ այսպէս.

«Թուրքաստանի Եպիսկոպոսներէն Կաթողիկոսի ընտրութեան գլխաւոր պատճառներէն մէկը այն էր, որ եթէ Ռուսաստանէն ըլլար ընտրութիւնը, չըլլայ թէ Ռուսաց Տէրութեան զօրութեամբը Զալտպէանց Սարգիս Եպիսկոպոսը յաջոդակէ այդ Հայրապետական գահը, ընդդէմ բոլոր ազգի կամացը. վասն զի Զալտպէանցը, իւր անարժան վարմունքովը, և ռուսասէր բարուքը հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսի ազգասիրական ձեռնարկութեանցը դէմ հակառակութեամբ, և անոր անձին դէմ թշնամաբար վարուելովը զամէնքը զայրացուցեր էր և ատելի եղած էր ամէնուն։»

Արդարև վասն Շանշեանցի ուրումն, որ հրաժարեցաւ ի պաշտօնէ վերատեսչութեան ի Ներսիսեան ուսումնարանէ, յաւուրս առաջնորդութեան իմոյ ի Տփխիս՝ բազումք ի մերայնոց համախոհք նորին առ ի արատաւորել զանուն իմ, թշնամական և խորամանկական ձգտողութեամբք և լեզուազարութեամբք՝ աղօտապէս և արուեստակութեամբ ի Հիւսիսափայլ լրագիրն հրատարակեցելովք, նաև յանստորագիր նամականիս և զգիշերայն ի շուկայս ցրուեալ ի զրութիւնսն խօսեցեալ են զայդմանէ, ցուցեալ զիս իբր Ռուսասէր և թշնամի հանգուցեալ Հայրապետին Ներսիսի, և Սաղէական խմորով զբազմաց միտս շփոթեալ են, սակայն ոչ որ ի նոցունց մինչև ցայժմ իբրև զՊարոն Փափազեանցն գրեալ ինչ է, կամ խօսեցեալ այդպէս ակն յայտնի նախատանօք և վատահամբաւութեամբ՝ վստահութեամբ եղեալ յատպարէգ տեսութեան ընդհանրութեան ազգի, և ես որոնէի զնոսա և որոնեմ, բայց ոչ

որք գայր առ լոյն և ելանէր յերևան իբրև զՊարոն Փափազեանցն, զոր և ես չ՚ճանաչեմ իսկ :

Արատաւորել զանուն ուրուք զրպարտութեամբ և արհամարհել զպատիւ նորա չարաչար նախատանօք, մի և նոյն է սպանանել զնա բարոյական մահուամբ. թէ և ես՝ զոլով առաջի Աստուծոյ, առաջի Ազգին իմոյ և առաջի խղճմտանաց իմոց անստգտանելի՝ պարտ էի ապաքէն զգրութիւն նորա՝ բըզզումն ճանճից համարել և սառնութեամբ արհամարհել զնոյնն. սակայն գուցէ լռութիւն իմ պատճառեսցէ զսոսկային զայթակղութիւն լրութեան ազգիս, և որովհետև զայթակղեցուցանողն՝ մինչև անգամ զմի ի փոքունց պ՚ստրտ է կախել զպարանոցէ իւրմէ զերկանաքար և անկանել ի ծով, զինչ ապա այնմիկ, որ զբովանդակ Ազգն ածիցէ ի զայթակղութիւն. և որովհետև նոյն արատ ոչ է վերաբերելի առ միմիայն որ և իցէ անձն, այլ առ ընդհանրութիւն լրութեան Ազգին, վասն որոյ և ես դիմեմ ի դատաստան Գերագոյն ժողովոյդ, որ է լրութիւն և կեդրոն ամենայն իրաւանց այնոցիկ Հայոց, յորոց միջի և արդէն Պարոն Փափազեանցն բնակի. քանզի զսոյն վէճ և զտարակուսանս հոյր են իրաւունք վճռել, եթէ՝ ոչ Գերագոյն ժողովոյդ, զի Տէր է դա արդարութեան :

Վասն ընտրութեան Կաթուղիկոսին ի Տաճկաստանէ, ոչ ի դէպ համարիմ երկայնել զբանս, քանզի քաջայայտ իսկ է պատճառ նորին ամենայն խոհեմամիտ և հեռատես ազգայնոց մերոց, վասն զի նոյն ընտրութեանն պատճառ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հաստատել զնոյն կարգս և զկանոնս, որք յառաջ քան զքառասուն ամս շարունակէին ի մէջ Հայոց բնակելոց ի Տաճկաստան, որոյ վասն ես իսկ էի, որ առաւել քան զամենեսեան աշխատէի յամենայն հարկաւոր տեղիս : Եւ առ բան նորա, որով համարի նա զիս իբրև թէ ռուսասէր բարուքս ատելի եղեալ առաջի Ազգին՝ հարկ լինի ինձ մտածել առ ենթադրումն նորին : Ես ոչ ժխտեմ զի փոխարքայն Կովկասու Կնեազ Բարեատինսկին յաւուրս առաջնորդութեան իմոյ ի Տփխիս՝ էր ընդիս սրտեռանդն բարեկամ, որպէս և բարերարն նորին Կնեազ Վարանցովն բարեկամ էր ընդ Տ. Ներսիսի, ի պատիւ որոյ և Բարեատինսկին ունէր առ իս զպատիւ մարդասիրութեան ոչ սակաւ : Սակայն և առ այս մինթէ կարելի է իբրև ալանցանս ինչ համարելով ինձ՝ թշնամաբար անուանել զիս Ռուսասէր : Եւ եթէ հրքան ազգաշահ գործք յառաջանան ի սիրոյ իշխանաւորաց Տէրութեան, նոքա՝ որք վարեն զիշխանութիւն Ազգային ազգասիրական հոգւով՝ կարեն փորձառութեամբք իւրեանց վկայել առ այս. բայց եթէ Պարոն Փափազեանցն ունի զապացուցական տեղեկութիւն ինչ, զի ես անարժան վարուք և ռուսասիրութեամբ լեալ եմ ատելի առաջի Ազգին, թող ցուցցէ

զատեցողն զիս և զստուգութիւն բանից իւրոց : Ես աւելորդ իմն համարիմ մի առ մի յիշել զազգաօգուտ և զկարևորագոյն ծառայութիւնսն, զորս մատուցեալ եմ Ազգին ի ձեռն նոյն Բարեատինսկուն. թէ՝ իմով ներգործութեամբ և թէ յանձնարարութեամբ Տեառն Մատթէոս Կաթուղիկոսին Ամենայն Հայոց, որք կան ակներև առաջի ամենեցուն և զորս թշնամիք ճշմարտութեանն ոչ կարեն ընդ վարագուրաւ ստութեանն ծածկել, թէ և բազմիցս աշխատ լիցին :

Իսկ առ կարծիսն Պարոն Փափազեանցի վասն ծառայութեանց իմոց և վասն որպիսաբար վարմանցն իմ առ Ազգն, առ եկեղեցին և առ նոյն իսկ անձն հանգուցեալ Աստուածարեալ Հայրապետին Ներսիսի՝ ես ոչ յանձնէ իմ վկայեմ, զի զրևալ է, թէ՝ « Որ զանձնէ իւրմէ վկայէ՝ վկայութիւն նորա չէ ճշմարիտ, » Այլ վասն այնորիկ առաջի առնեմ Ատենիդ վկայ հաւատարիմ քանի մի օրինակս կոնդակաց Տ. Ներսիսի ուղղեալս առ իս ի ժամանակս ժամանակս ծառայութեանց իմոց, որք և մասնաւորապէս ի պատճառս Պարոն Փափազեանցի զրպարտութեանն տպեալ են միջնորդութեամբ Արշաղոյս Արարատեան լրագրոյն ի 1863 ամի. (համար 110 ի Զմիւռնիայ.)

Ա.

Ի 14ը Յունիսի 1848 ամի,

Ներսէս ծառայ Քրիստոսի . . . . Կոնսիստորիայի Հայոց Վրաստանայ գրեմ,

Զի Շնորհունակ Սարգիս Վարդապետ Սանահնայ Սուրբ Աստուածածին վանաց, որպէս ծոցածին արժանաւոր իւրումն կոչման ուխտի՝ յայտնելով զիւր վարդապետական կոչումն. իւրով սրտեռանդն ցանկութեամբ ազգական բարեաց կարողացեալ է ըստ յաջողելոյ Տեառն տաճարի յիշեալ սրբոյ վանից սկզբնաւորել անդէն զուստմնարան մանկանց Հայոց յամի 1845 . . .

Բ.

Առ ժողովուրդն Վզլարայ յամի 1851. Յունվարի 2ը համար 158 . . . .

Հարազատ մշակն Սրբոյ եկեղեցւոյ և Ազգի Հայոց բազմաշխատ Սարգիս Վարդապետն Զալալեանց և ասպետ. կարգեալն ի մէնջ վերահասու և քննիչ հոգևոր գործոց վիճակին Ասարախանայ՝ հրապարակական քննութեամբ բաղեալ ի գործոց Կոնսիստորիին և ի սեպհական ապահովագրոց Սերովբէ Եպիսկոպոսի տուչոց գործավար սնձանց, ցուցանէ ստուգեալ հարիւր վեց

հազար քառասուն և ութ մանէթ 24½ կոպէկ, հոգեկան արդիւնս և գնուիրեալս և կամ գնուակեալս յօգուտ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և այլոց վանօրէից և եկեղեցեաց, յորմէ և ոչ մի կոպէկ հասուցեալ է Կաթուղիկոսին կամ Սինոդին Էջմիածնի և ոչ յայտնեալ է բնաւ վասն ամենարարեպաշտ նուիրանաց պատուելի ժողովրդեան Հայոց . . . . .

Գ.

Ի 10ᵍ Փետր. 1851 ամի համար 38.

Շնորհազարդ Սարգիս Վարդապետ և Ասպետ,

Ընկալեալ զգրութիւն ձեր ի 17ᵍ Յունվարայսր ամի, համար 8. և մխիթարութեամբ իմում հոգւոյ ընթերցեալ ի լուր Ատենակալաց ի Սինոդին և անդամոց վանքական կառավարութեան՝ զոհութեամբ իմով զԱստուծոյ վասն պարգևելոյ զձեզ բազմաջան մշակ սրբոյ Եկեղեցւոյ Հայրենեաց, ուստի և իմով հարուստ յուսով ի վերայ Ձերում հանճարաւոր խորհրդածութեանց վասն եկեղեցական արժանաւոր կարգաւորութեանց ըստ վայելչութեանց համազգական քրիստոնէական բարեպաշտութեանց, որ ի զարաւոր ժամանակաց սկսեալ ցարդ ևս զտանի անխնամ յամենից հոգևորական կառավարչաց, որով և ամենայն Ազգն Հայոց ըստ ամենայն տեղիս զտանի զրկեալ ի բազում բարեաց ազգականաց և ի մխիթարութեանց հոգևորականաց յառաջնոց և ի վերջնոց որպէս երևին բացայայտ ի սմին Ձերում գրութեան անհոգութիւնք առաջնորդաց և ընդ նոքօք իշխանութեանց։

Դ.

Ի 18 Մայիսի 1851 ամի համար 157,

Առ Կնեազ Միխէել Սիմոնովիչ Վորոնցով Փոխարքայն, յազգս վիճակին Բարթուղիմէոս առաքելոյ մնաւորելոյ ընդ վիճակաց Պատրիարգին Կոստանդնուպօլսոյ։

Ծանուցանեմք Ձերոյին պայծառափայլութեան, թէ՝ վասն այսր գործոց ընկալայք զգիր ի Պատրիարգէն Կ. Պոլսոյ, որ հարցանէ զկամս իմ. որում զեռ չեմ պատասխանեալ ի պատճառս մնալոյ հոգևոր գործոց Կ. Պոլսոյ վերաբերելոց մեզ ի խանգարման, զոր վասն ուղղելոյ չունիմք զոք ընդունակ հոգևորական, ոչ Էջմիածին, ոչ ի հինգ վիճակս Ռուսաստանի և ոչ ի Տաճկաստան. որում մարթ իցէ առնել զյանձնարարութիւն, բայց ի Սարգիս վարդապետէ Ջալալեանց, որ հրամանաւ մերով առնէ զքննութիւն յԱտրբախանու վիճակին, և ապատեմք զայսոսիկ նորա առ ի առաքել ի Կ Պոլիս։

Եւ զի ոմանք ի Կաթուղիկոսաց աշխատեալ են ստանալ ի Սուլթանաց Օսմանցւոց ի Շահից Պարսից զփարմանս, որովք տուեալ լինին Կաթուղիկոսաց իրաւունք Աշգիս և հաւատոյն ազատութիւն և օգուտս, ուստի զպատճէնս այնոցունց փարմանաց տամք արտագրել և նախ առաքել առ Ձերդ պայծառափայլութիւնն, և ապա ի ձեռն նոյն վարդապետի հանդերձ խընդրագրով առ Սուլթանն, առ ի հաստատել զտուեալ իրաւունս ի նախորդաց իւրոց, և յայնժամ ունի ազգն Հայոց մնալ ընդ իշխանութեամբ Կաթուղիկոսին Էջմիածնայ ըստ առաջնոյն և եկեղեցական կառավարութիւնն բարեկարգեսցի . . . . .

Ե.

Ի 22ᵍ Յունիսի 1854 ամի համար 217.

Բարեջան և բազմաջան Սարգիս վարդապետ և ասպետ Ջալալեանց.

Գիր Ձեր առ մեզ ի 26էն Փետր. ամին անցելոյ համար 37 ընկալեալ յ8ᵍ Յունվարի, հանդերձ տետրակաւ 933 ռուբլի. 38 կոպէկ ծախսուցն Ձերոց յամի 1853. թէպէտ առաքումն Ձեր զհաշուեցուցակ ստացելոց և ծախելոց՝ է համաձայն ընդհանրական կանոնաց սահմանաւոր համաշխարհական տուրք [illegible], [illegible] ի մասին ձերում ճշմարիտ վարդապետական բնաւորութեանց վկայելոյ ի բազմամեայ ժամանակաց՝ բանք Ձեր վասն արդեանց և ծախուց՝ մի և նոյն են առ մեզ ամենահարազատ հաշուեցուցակ, զի հաւատացեալ եմք թէ՝ են համաձայն աւետարանութեանցն : Եղիցի բան այոն, այո, և ոչն ոչ :

Զ.

Ցամի 1854. Յունիսի 22. . .

Հանճարունակ հարազատի Սրբոյ Առաքելական եկեղեցւոյ Հայոց մեր Սարգիս վարդապետի և ասպետի Ջալալեանց . . .

Առ որ այժմ միշտ զձեր բարձր Արժանապատուութիւնն կարգեցաք մեր փոխանորդ վասն ամենայն գործոց եկեղեցականաց յանձն եղելոց մերում համազգական եկեղեցական ծայրագոյն տեսչութեանց՝ գրեմ ձեզ . . . . Ընդ ընկալնուլն այսմ գրութեան մերում, որպէս և արժան գտանելունիցիք զոք կամ բանիւ կամ գրով պահանջեսջիք ի Կոնսիստորիայէն զօրինակն այնմ, պրոզոկոլի (համախոսութեան) . . . . .

Է.

Ցամի 1854. Ցունիսի 22 . . .

Շնորհաշուք Սարգիս վարդապետ և ասպետ Զալալեանց . . .

Ցայտնեմ Ձերում արժանանձնութեան հարազատի Սրբոյ Առաքելական եկեղեցւոյ Հայոց և մեր՝ Աստուածապարգև բարեջան մշակի Սրբոյ տաճարի Աստուծոյ և ժողովրդեան Հայրենեացս՝ զշնորհապարտութեան իմ, զի զումարք տարեկան արդեանց ամենայն շինուածոց մերոց ի Քիշնև քաղաքի գոլով ընդ տեսչութեամբ նորան զերազնուականութեան Աղայ Աստուածատրոյ Ամատեան Անուշեանց ի տարին 2041 ռուբլի արծաթ այժմ ի հաշուէցուցակին արդիւնաբեր տանց և տուքանաց առաքելոյց մեզ այսու Ձերով գրութեամբ ի 26[6] Մայիսի համար 55. ընթերայ եղեալ երկու հազար ինն հարիւր հինգ, (2905.) ռուբլի արծաթ. արտաքոյ զտանելոյն ի ներքոյ դաշնագրութեանց կարօտելոյց լրութեանցն ժամանակաց տանցն՝ եղելոց ընդ 33. 12. 1. և 22. համարաց . . .

Ը.

Ցամի 1854. Սեպտ. 27. համար 340 . . .

Շնորհունակ Սարգիս վարդապետ և արժանաւոր ասպետ,

Գիր Ձեր առ մեզ ի29[6] Օգոստ. համար 85. եհաս մեզ ի 23[6] այսմ ամսոյ հանդերձ եղելովքն ի նմին այլ միւս թղթով Ձեր առանց համարոյ՝ և մակարդակաւ Ձեօք կատուցեալ տանն յանկեան որմանն այգւոյն առաջնորդարանի . . . . . յազագս շինելոյ հաստատուն հիմամբ զ95 սաժէն տախտակօք պարսպեալ գետնոյն և յերկոսին յանկիւնսն նորին զերկոսին տունսն մեօք առաջադրեալ Ձեզ, որոց միոյն առաքեալ էք զձեն Ձերով գովանի աշխատասիրութեամբ հիմնարկեալ և կատարելագործեալ և ըստ Ձեր նշանակելոյ նաև ծածկեալ զտանիսն։ Բերկրութեամբ հոգւոյ իմոյ օրհնելով զբարեգութն Աստուած ազաչեմ զմարդասիրութեան նորա օրհնել զՁեզ և զկեանս Ձեր և զամենայն աշխատութիւն Ձեր՝ Ձեզ յատկացեալ բարեջանութեամբ վասն Մօրն Լուսոյ . . . . . Կաթուղիկէ Էջմիածնի . . . . Նոյնպէս ևս ոչ զտաւ զարմանալի ինձ ցայն վայր անօգնական գտանելն Ձերում արժանանձնութեան անծանօթի իւրումն սեպուհ պարտաւորութեանց Սրբազան Մատթէոս եպիսկոպոս վիճակաւորի մինչև խնայել ձեզ զօգնականութիւն իւր փոխատրութեամբ երկու հարիւր մանէթ արծաթ դրամոց վասն շինուածոց յազագս Սրբոյ Էջմիածնի ի բազում

զանձուց յանուն նորին Էջմիածնի մատուցելոց ինքեան ի ջերմեռանդական նուիրանաց նորուն լուսածնունդ զաւակաց ամենասիրելի ժողովրդեան Հայոց։ Եւ զու մի բնաւ զարմացիս վասն նոցուն . . . անօգնականութեանցն Ձեզ, այլ հաւատարիմ յուսով ըստ մարգարէական ձայնարկութեանցն՝ թէ բարի է յուսալ ի Տէր, քան յուսալ ի մարդիկ, և զու յուսա՛ ի Տէր և լեր աներկիւղ, և արա զամենայն բարի՝ հաւատի եղեալ թէ և ձեզ ըստ զրեցելումն՝ օրհնեսցէ Աստուած ի վազորդենէ մինչև ի վազորդեան, զի նոյն է Աստուած որպէս և օրհնեալ է զձեզ ի ձեռն ծառայի իւրոյ անծանօթի Սրբոյ Էջմիածնի նորուն զերարժան անձնութեան Իվան Ալէքսէիչ բարերարողի Ձեզ ի ժամանակի Ձերում կարեաց . . . . Եւ զու լե՛ր յուսահովի զի ոչ յիմում կենդանութեան և ոչ յետ վախճանի իմոյ չունիք զուք մնալ պարտաւոր ումեք ի մասին զումարաց ի գործարկելոց Ձեօք վասն շինուածոց յանուն Սրբոյ Էջմիածնի որպէս և յառաջ քան զայս ունիմք գրեալ Ձեզ . . . . Ցաղագս տարակուսանացն փոքրիկ թղթով գրեցելոցն ձերոց առանց մեր հրամանի ստանալոյ Ձերոյ զպարտս վասն շինութեանցն առաջադրեցելոցն Ձեզ ի զուր են կարծիք Ձեր և գրագրութիւնք, զի Ձեր Ձերում վարդապետական արժանաւորութեանց հարազատութիւն հոգւոյ վասն եկեղեցւոյ Հայրենեաց և մերում անձին և հրաման տամ Ձեզ ընկալնուլ զամենայն զգումար ամսական և տարեկան վարձուց ամենից շինուածոցն մերոց ի լոյս ընծայեցելոցն Ձեօք . . . . . և ցանկալի է ինձ թէ համաձայն Ձերոց ցանզութեանց ամենայն շինուածք մեր այդր ի Քիշնև կատարելագործեսցին Ձեօք։ Ինձ հարկաւորագոյն էր վազվազակի վերադառնալն Ձեր առ մեզ, վասն առաքելոյ զՁեզ ի Կ. Պոլիս, այլ զի յառաջ քան զվախճան այսմ անակնկալ տարաձայնութեանց հղօր տէրութեանց չէ կարելի առաքելն մեր զՁեզ ի Կ. Պոլիս, ընտրելի զատիմ զի ի դադարել գործառնութեանց շինուածոցն այդր յազագս ցրտութեանց վերաժամանելոյ յանձնառեալ զամենայն զժուարագրութիւն ճանապարհորդութեանց եկեսցիք առ մեզ և վերադարձուցուք յառաջ քան զբառնել գարնան . . . .

Թ.

68—Մարտ. 1855 ամի.

Ներսէս ծառայ Քրիստոսի . . . . . Աստուածային առանձնաշնորհութեանց պարգևօք բարետոհմիկ մեծագործ հօր որդի Յովհաննէս Մուրատ Պէյ, Մանուկ Պէյեան ջերմեռանդութեամբ հոգւոյ իմոյ սիրեցելոյ . . . .

Հարազատ մշակն եկեղեցւոյ Հայոց Սարգիս վարդապետ Զալալեանցն

ողջամբ ժամանեալ առ մեզ . . . . . , Ցորմէ լուեալ վասն ցանկալեացն մեզ յաղագս Ձերում որպիսութեանց, զոհացաք զԱստուծոյ Սարգիս Վարդապետն բերի վասն եպիսկոպոս օծելոյ, ըստ որում բաց ի նմանէ յայժմէն ժամանակի վասն եկեղեցւոյ Հայոց կամ վասն ազգի և կամ վասն Էջմիածնի, ոչ զոյ բան զնա անձն յուսալի . . . .

Ժ.

Ի 17ᵍ Մարտի. 1856 ամի. համար 99. ի պատասխանի գրութեան ազնուական Սարգիս Մելիքվանեան . . . .

Գրութիւն ձեր առ մեզ յ7ᵍ Յունվարի. ընկալեալ յ8ᵍ ամսոյս. և ընթերցեալ արժանաւոր մտադրութեամբ, գտաք զայն ոչ որպէս զանգատագիր ձեր միայն վասն Ձեր զրկանաց ի Սրբազան Սարգիս եպիսկոպոսէ հարազատէ Սրբոյ Առաքելական եկեղեցւոյ Հայոց և մեր, այլ որպէս ամբաստանական գրութիւն յաղագս Նորուն Սրբազնութեան իջանելոյն ի տան Մարտիրոսի Հախումեանց՝ Ձեր թշնամի եղելոյ ըստ Ձերում այսմ գրութեանց։ Մեք զնա առաքեալ եմք որպէս հարազատ մեր և եկեղեցւոյ և ամենայն միաբանութեանց մերում հայրենի Ազգի Հայոց յաղագս վերաքննութեանց Կոնսիստորիական կառավարութեանց և ամէնից քրիստոնէական բարեկարգութեանց մերում ծայրագոյն վերատեսչութեանց յանձն եղելոց, որոյ եպիսկոպոսավայելուչ Աստուածահրաման բարեպաշտութեամբ գործավարութեանցն յամենայն գործս յանձն եղեալս նմին առ ի մէնջ ի 1846 ամսոյ հետէ. այդր ի Ղարաբաղ, ի Նուխի, ի Շամախի, ի լայնածոց վիճակին Վրաստանայ, յԱստրախան և ի Բեսարարիայ. զտանին ջատագովեցեալք յամենայն միաբանութեանց իւրաքանչիւր վիճակաց, որոց իւրաքանչիւրքն ևս ազերսեն մեզ կարգեալ վիճակաւոր ինքեանց . . .

(Թող չ'մոռցի Պարոն Փափազեանցն յայն թէ՝ եմ լեալ Ազգին, բայց որ ազգին, զի սոքա են ահա ծանօթքն իմ, որք գրեալ են զջատագովութիւնս, և են աւելի քան զկէս միլիոն անձինս։)

ԺԱ.

37ᵍ Յունիսի 1856 ամի համար 286.

Առ Ժողովրդոն մայրաքաղաքին Մոսկուայ։

Առաքեցաք փոխանակ մեր զհարազատ մշակն Սրբոյ Առաքելական եկեղեցւոյ Ազգի Հայաստանեայց, և զՔրիստոսապատկեր հովիւն ամենասուրբ արեամբ Քրիստոսի գնեալ քսակն հոգին հաստատելոյ մերում

հօտապետութեանց զՍրբազան Սարգիս Արք եպիսկոպոսն Ջալալեանց կոչեցեալ, վասն փոխանակ մեր ներկայ գտանելոյ ի հանդիսի Սրբազան օրինակատարութեանց ինքնակալի ամենայն Ռուսաց . . . . Օծելոյն Աստուծոյ. . . . Եւ յանձն առնեմ զնորին Սրբազնութիւնն . . . . ընկալնուլ զնա որպէս պատկեր և փոխանորդ մեր, և զտանել մարդասէր առ նա որպէս բարի և հաւատարիմ ծառայ Աստուծոյ և հարազատ մշակ Սրբոյ Առաքելական եկեղեցւոյ Հայկազանց։

Ահա այսոքիւք կոնդակօք զորս զրեցաք ի բաց Թողլով և զայլ այսպիսի կոնդակս բազումս զզրեալս ի Հայրապետէն Ներսիսէ յապացուցութիւն ծառայութեանց իմոց և վարմանցն իմ առ Ազգն և առ անձն նորա՝ կարէ Աստեանդ դատել զգործսն իմ և զորպիսաբար յարակցութիւն իմ առ նոյն Հայրապետն և առ Ազգն, ապաքէն մակդիրքս այսոքիկ, զորս յիշէ Նորին Վեհափառութիւնն ի Կոնդակսն իւր յայտարարք են շնորհակալութեանց նորա առ իս և հայրախնամ անյեղլի սիրոյն ի տրիտուր անձնանուէր ծառայութեանց իմոց, և թէ և հարկն ստիպէ զմեզ աստանօր վասն պաշտպանելոյ ճշմարտութեան և ի յանդիմանութիւն ստութեան և մեռեալ խըղճիւ թշնամութեանն Պ. Փափազեանցի առ իս՝ յիշատակել յակսանէ յանուանէ մի առ մի զամենայն արդիւնաւորութեան գործոց իմոց և ծառայութեանց յօգուտ ազգի և եկեղեցւոյ և ի մխիթարութիւն սրտի Աստուածարեալ Հայրապետին, զորս թէ յաւուրս նորա. և զորս թէ յետ վախճանի նորին՝ այն թէ որպիսի եղանակօք, և զորքան կորուսեալ դրամս Աթոռոյն հանեալ եմ ի կորստենէ, ընդ նմին և բացեալ եմ աղբիւրս նորանոր արդեանց և շահեկանութեանց, շինեալ եմ զուսումնարանս ի տեղիս տեղիս ի կրթութիւն հայ մանկտւոյն, սեպհականեալ եմ Աթոռոյն բազում հայթայթանօք զվիճելի կալուածս բազումս և մեծագինս, յաւելեալ եմ զնորանոր շինուածս կրպակաց և այլ աթոռապատկան տանց և տեղեաց, և այլ ևս բազմադիմի եղանակօք յառաջացուցեալ եմ զազգաշահ գործս ըստ տանելոյ կարողութեանս ի սէր Ազգին՝ բայց աւելորդ իմն համարիմք պանծաբանել վասն այսպիսի մերոց աշխատութեանց, յանուն անուան թքուելով զայնս, քանզի նպատակ իմ եղեալ է ոչ զանձն իմ, այլ զազգն շահել, ըստ սեպուհ պարտաւորութեանց հոգևորական կոչման իմոյ, և մանաւանդ զի գրեալ իսկ է, թէ «Մի զովեսցեն զքեզ՝ քո շրթունք»։ Ապա զիարդ Պ. Փափազեանցն կամի արատաւորել զանուն իմ առաջի ազգին, որում լեալս եմ անձնանուէր և անձուրաց ծառայող։ Իսկ եթէ ունի նա ճշմարտութիւն խօսելոյ, ես զճշմարտութիւն նորա ոչ կամիմ ծածկել։ Թող յայտնեսցէ ապացուցաբար ի դատապարտութիւն իմ և ամենայն գործոց իմոց, և ի հեր-

քումն ամենայն հզօրացեալ կոնդակաց երջանկայիշատակ և ազգասէր Կաթուղիկոսին Տեառն Ներսիսի, որք գրեալք են վասն անձնադիր և հարազատ մշակութեանց և ծառայութեանց մատուցելոց ինև Ազգին իմոյ սիրելւոյ:

Ի հետևումն բանիցս այսոցիկ ըստ զօրութեանց վերոգրեալ կոնդակացն յընթացս ամենայն իմոց գործառնութեանց, եղեալ եմ հաւատարիմ առ Ազգն առ Եկեղեցին և առ անձն Նորին սրբութեան Տեառն Ներսիսի: Քանզի Նորին սրբութիւնն առաքեաց զիս պատգամաբերութեան հանդիսի Թագադրութեանն ի մայրաքաղաքն Մոսկով, յ7ն յուլիսի 1856 ամի, որպէս ցուցանէ կոնդակ Նորին սրբութեանն գրեալ առ ժողովուրդսն Մոսկովայ: Եւ ես անդրէն այսինքն ի Մոսկուայէն յետ Թագադրութեանն վերադարձայ ի Տփխիս. յելն նոյեմբեր ամսոյ այնր 1856 ամի. և վախճան կենաց Նորին վեհափառութեան եղև ի 13 փետր. 1857 ամի, հետևաբար այսմիկ՝ անհաւատարմութիւն իմ և Թշնամաբար վարմունք ընդդէմ անձին Նորին վեհափառութեան և հակառակութիւն իմ առ ազգասիրական ձեռնարկութիւնսն Նորին սրբութեան ըստ ասութեան Պ. Փափազեանցի՝ զհետ զայ կարծել, թէ՝ լինելոց են յընթացս երկուց ամսոց և երեքտասան աւուրց վերադառնալոյն իմոյ ի Մոսկուայէն:

Արդ՝ խնդրեմ ի գերազոյն Ժողովոյդ, զի արդարասէր ատեանդ պահանջեսցէ ի Պ. Փափազեանցէն, առ ի ցուցանել պարզապէս և աներկբայութեամբ, թէ զինչ ազգասիրական ձեռնարկութիւնք են եղեալ Նորին վեհափառութենէն, յընթացս այսր կարճ միջոցի և որպիսի հակառակութիւնք և Թշնամանք են լեալ յիմմէ կողմանէ, որպէս զի լուիցէ աշխարհ ամենայն: Եւ զայս ևս կարծել ի դէպ երևի, զի Պ. Փափազեանցն կամ ունի աստէն զխորհրդակիցս նմանապէս ես և ի նոցունց ստիպեալ է բերել ի գայթակղեցուցիչ գրուածն՝ և կամ ինքն ինքնին վստահ է ի գիտութիւն և ի վճռաբար խօսակցութեանն իւրում, ուստի կամ հաստատեսցէ զվկայեալսն յինքենէ, կամ եթէ ոչ հաւաստեաւ ցուցցէ զնոսա որք եղեալ են թերևս՝ նմա առիթ և յորդոր վասն զնոյնպիսիսն գրելոյ:

Աներկբայելի յուսով մնամ, զի արդարախնդիր ատեանդ ունի կատարեալ զայս իմ իրաւացի խնդիր, և շնորհս արասցէ բաւականացուցանել զիս կամ առանձին, կամ միջոցաւ լրագրի իմիք, վասն զի իմ կամք են և սրբութիւն օրինաց զնոյն պահանջէ, զի Թշնամին ազգի և եկեղեցւոյ և նոյն իսկ անձին Հայրապետի, իւրով չարաչար գործովք. եթէ զոյ անձն այնպիսի դատապարտութեան արժանի՝ ի հրապարակ ելցէ տեսութեան լրութեան ազգի անխուսափելի վրիժապարտութեամբ, եթէ ես ինքս եմ և եթէ այլք,

այնուհետև դադարիցի զայթակղութիւնն, որ տարածեալ կայ յամենայն ուրէք ի զուր սերմանեալ յանաստուած և յանխիղճ արանց ի կործանումն ճշմարտութեան, հաւաստի գիտելով թէ զերազոյն ժողովդ ոչ երբէք ցանկայ, զի ո և իցէ անձն առանց իրաւանց և արդարութեան ի ձեռն նախանձոտաց դատապարտեսցի սոսկալի զրպարտութեամբ ի չարաչար վիշտ սրբութեան օրինաց:

Եւ թէ վասն էր յուզեցան, կուսակիցքն և համախոհքն Պ. Շանշեանցի, զորմէ յիշեցաք ի վեր անդր՝ զինու Թշնամութեան և նուաստախոհ բամբասանաց յառնել ի վերայ իմ, ոչ անդէպ համարիմ ի յայտ ածել մասնաւոր ծանօթութեամբ զնոյն անցս: Վասն զի Ներսէս հանգուցեալ Հայրապետն կարգեաց զնա զՊ. Շանշեանցն ի պաշտօն վերատեսչութեան ուսումնարանի իւրոյ, և յետ ինչ ժամանակաց հրաժարեցաւ նա ի նոյն պաշտօնէ, և թէ զինչ էր պատճառ հրաժարմանն՝ ահա ցուցանէ կոնդակ վեհափառ Կաթուղիկոսին Ներսիսի գրեալ վասն այսորիկ առ Աղաֆօն Դաւթեան Հայ իշխանն, ի 1850 ամի փետր. 24ին, համար 47, զորոյ զպատճէնն դնեմ աստանօր:

. . . . . Ազնուական Պետրոսն Սամուէլեան Շանշեանց որոյ ազգասիրական յոյսն առաւել էր ի ձեզ և ի մեզ՝ յոյժ պակաս գտաւ զի բաց յինքենէ ոչ զոք կամելով առնել գործակից վասն ուսումնարանի կառավարութեանց, ի կամելն մեր ունել վասն օգտակարացն ուսումնարանի զնորին պայծառութիւնն Կնեազ Իւանէ Արզութինսկի, զԱզնուական Դաւթեան Խէրթինեանց և նորոգ հաստատեալն յԱզնուական զԳէորգ Մանդինեանցն. Նա թողեալ զիւր պաշտօնն ուսուցչական կառավարութեանց յայնմ ուսումնարանի Հայոց Թիֆլիզոյ՝ հրաժարեալ յամենայնէ գնաց ի տուն իւր, և թէ զինչ է պատճառ այսպիսի առանձնական տեսչութեամբ միայնակ յօժարելոյն նորա կառավարելոյ ուսումնարանն և զբազմութիւն աշակերտաց, և մասնակից զոք ունելոյ աղագաւ ըստ մերում նախամտածութեանց մեզ յայտնի եղելոց՝ բացէ ի բաց՝ հրաժարմանն՝ մեք չկարողացաք նշմարել ինչ առիթ շահաբեր կամ վայելչական, և վասն այնորիկ թողաք զնա երթալ զհետ կամաց իւրոց

. . . . . Նորուն ազնուականութեան Պետրոս սիրականին մեր և Ձեր խոստացայ, զի թէ խօսեցեալ ռոճիկն վասն նորա 500 ռուբլի արծաթ սակաւ է վասն իւր՝ տացես զ1000 ռուբլի արծաթ. և հաւատարիմ բանիւ խօսեցայ առաջիկոմանց գտանելոց առ մեզ ի մերում սենեկի. զի զոր ինչ և ինքն կամեսցի վասն անձին իւրում առանց խնայելոյ ունիմ տալ ինքեան, այլ չեղև համոզել զնա ի կամս մեր, և ես ևս ոչ առանց պատճառի ըստ իմում նախահոգութեանց չ'կամեցայ յանձնել նմա միայնակ՝ զայնպիսի ի սին ժամանակի ուսումնարանական դրութեանց . . .

Զկնի ժամանակաց ինչ անցանելոյ ընդ այս Պ. Շանշեանցն միջնորդութեամբ իշխանաւոր բարեկամաց իւրոց՝ առ Հայրապետն Ներսէս՝ կրկին անգամ եմուտ ի նոյն ուսումնարան ըստ պաշտաման վերատեսչութեան և ընդ նմին դասատուութեան քրիստոնէական վարդապետութեան, բայց թէ ընթացս ժամանակաց գործավարութեան նորին Շանշեանցի՝ զինչ ինչ լսելի լինէին վասն մանկանց ուսումնարանին՝ ահա և վասն այսորիկ դեռեմ ըզ քաղուած ինչ ի կոնդակէ Նորին վեհափառութեան Տեառն Ներսիսի. զոր գրեալ է առ Հոգաբարձուսն նոյն ուսումնարանին:

«. . . . . Լսելի լինի մեզ լուր անարժան մերում եկեղեցական ուսումնարանի, իբրև զի յառաջադէմ աշակերտք ուսումնարանի անհաւանք զտանին գրութեանց գերարժան հեղինակաց Հայոց՝ Գրիգորի Նարեկացւոյ, Ներսիսի Շնորհալւոյ, նա իսկ և Սաղմոսարանաց Դաւթի և այլոց հիմանց եկեղեցւոյ Քրիստոսի հրաշաբան Աստուածաբանութեանց, ևս և կրօնի կուսական կարգաց, Եպիսկոպոսութեանց և Վարդապետութեանց և այլոց զանազան եկեղեցական կարգադրութեանց, ևս և աղօթից և ճգնաւորական վարուց, որք համարին առ ի մէնջ հոտ ի մահուանէ ի մահ, և ոչ ի մահուանէ ի կեանս, վասն որոյ խնդրեմ հանճարաւոր ուշադրութեամբ զտանել նրբահայեաց, թէ՝ ընդէր իցեն տարածեալ այսպիսի անարժան մերում ուսումնարանի չարահամբաւ լուրք: Եւ մեք հոգ կալցուք փութացուցանել ըզ Սարգիս սրբազան Եպիսկոպոսն յաղագս առաքելական եկեղեցի Հայոց:» (ի 1855. ի 27 օգոստոս)

Տէս ի Տաճնամեայ տեսութեան Ներսիսեան ուսումնարանի. երես 96.

Ի 13ն օգոստոսի 1855 ամի. դարձեալ առ նոյն հոգաբարձուսն:

«. . . . Բայց առաւել զգալի զտանի մեզ. զի լսելի լինին ի հասարակական համբաւոց շնչիւնք ոչ պատկանեալ ուսումնարանաց Հայկազանց, իբրև թէ տկարութեամբ կատարելութեան գիտութեանց Աստուածաբանութիւնք կամ այլ շարադրութիւնք նախնեաց Հայոց չեն այնպէս կատարեալք որպէս են կատարելագարդեալք յամենայն Եւրոպայ, կամ մանաւանդ ի Գերմանիայ, Հարիւրաւոր ամաց Հռովմէական ամբարիշտ քարոզչացն էին գայթակղութիւնք անուսումն, այլ Քրիստոսեան Աստուածային վարդապետութեամբ առաքինացեալ ազգաց բազմաց գայթակղութիւնք ընդ ամենայն տեղիս, իսկ ոչ ի վաղուց ժամանակաց առաւել քան զնոցայն սկզբնաւորեցին Եւրոպական ուսուցչութեանց գայթակղութիւնք Լուտերականաց և Գերմանացւոց, որպէս ոչ ի վաղուց յայտնեցեալն ի Ղարաբաղ, և ի մերձաւոր ժամանակաց հետէ յամենայն սահմանս Տէրութեան Օսմանեցւոց. նա իսկ և ի Կոստանդնուպօլիս, և իբրև ոչ անհաւատի բաւական հռչակահարութեամբ նա և ի Շամախի քաղաք, մի և միարասցէ ամենակատար ուսուցիչ հաւատոյ

Աստուած մեր զթոյլատրութիւն այնպիսեաց գայթակղեցուցչաց մերազանց ի Քրիստոսապատուէր առաքելական վարդապետութեանց Սրբոց Լուսաւորչացն իւրեանց Թադէոսի և Բարթուղիմէոսի և սրբոյն Գրիգորի Պարթևի. Որպէս մօտայն հագուստի և այլ իրաց, այնպէս և հաւատոյ մօտայն գտանի սիրելի անձնահաւան ընթերցասիրաց, բայց մի է ճշմարտութիւն հաւատոյ այն զոր պատուիրեաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս, ուսուցանել ամենեցուն և զոր ուսուցին նոքա մինչև ցմահատունն բազմաթիւ հաւատոյ, յորմէ պահեսցէ Տէր Աստուած մեր՝ զմեզ և զամենայն Ազգն Հայոց: Եւ այս ինքն է պատճառ, զի ի մասին կարգադրութեան ուսումնական ընթացից ի մերում ուսումնարանի ընտրելագոյն համարիմք սպասել մինչև ցառաքումն Սարգիս Սրբազան Եպիսկոպոսի:

Զուսումնարանական կարգադրութիւնն ի կատար ածել իսպառ՝ արգելեաց վաղահաս վախճան Տեառն Ներսիսի, իսկ յաւուրս առաջնորդութեան իմոյ՝ այս պարտաւորութիւն մնաց ի վերայ իմ. ուստի և ես ընթացեալ ըստ մտադրութեանց և նպատակաց Նորին վեհափառութեան՝ հրաւիրեցի զՊ. Շանշեանցն, զի կատարեսցէ զպաշտօն վերատեսչութեան ըստ կամաց իւրոց. բայց զպաշտօն դասատուութեան քրիստոնէականին զոր ուսուցանէր նա ձեռագիր՝ մուրացածու տետրակօք ի բաց թողցէ, որպէս զի ուսուցեն զնոյն հոգևորական անձինք. մանաւանդ զի՝ նա ինքն Պ. Շանշեանցն [illegible] զդարձեալ որպէս դարկն էր, զի լեալ էր կարող կատարել զնոյն ծանր պաշտօն: Յայս հրաւէր իմ Պ. Շանշեանցն՝ չգիտեմ յինչ միտս, զչարեալ ի բաց եթող ընդ քրիստոնէական վարդապետութեան պաշտօնին և զվերատեսչականն. իսպառ հրաժարեալ յուսումնարանէն, ասելով թէ՝ առանց դասատուութեան քրիստոնէական վարդապետութեանն՝ ինձ չէ պիտոյ վերատեսչութիւնն: Եւ այսպէս հրաժարեցաւ նա, և վասն այնորիկ համախոհք նորին սկսան այնուհետև զամենայն թշնամանս ի գործ դնել առ իս, զի արատաւորեսցեն զանուն իմ և հասցեն նպատակաց իւրեանց, որպէս և եղև իսկ. քանզի յետ ելանելոյ իմոյ ի Տփխիսոյ վերադարձուցեալ զՊ. Շանշեանցն կարգեցին ուսումնարանին Շուշւոյ քաղաքի նահանգին Արցախու դարձեալ այնու իրաւամբք՝ այսինքն ընդ վերատեսչութեանն և Քրիստոնէականին պաշտօնիւ. զի նա ոչ կամեցաւ մնալ ի Տփխիս, ըստ որում արդեն ամենայն մտադրութիւնք նորա ի Տփխիս եղեն յայտնի և հրատարակեալ, վասնորոյ զառանձինն ընտրեաց վասն իւր ի Ղարաբաղ:

Ի 24ն Մայիսի 1864, ամի.

ի Վանս Սանահնայ.

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿՅԱՆ
Հ.Ս.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/II 1922
имени Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2002

4418

<< Ազգային գրադարան
NL0031437

4279